ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Ինտերակտիվ ուսուցման միջոցով արժեքային համակարգի ձևավորումը տարրական դասարաններում»

ԱՌԱՐԿԱ՝ մայրենի

ՀԵՂԻՆԱԿ՝ Լիլիթ Թադևոսյան

ՄԱՐԶ՝ Արագածոտն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՝ Կոշի միջնակարգ դպրոց

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ՝ Լիլիթ Մալխասյան

Բովանդակություն

1.Ներածություն.....3

2.Գրական ակնարկ.....6

3.Փորձարարական հետազոտություն.....11

3.1Խմբի նկարագիրը.....11

3.2Փորձարարական դասեր.....12

3.3Փորձարարական դաս 1.....12

3.4Փորձարարական դաս 2.....14

4.Վերլուծություն.....15

5.Եզրակացություն.....16

5.Գրականության ցանկ.....17

6.Հավելված.....18

1.Դասապլան-1.....18

2.Դասապլան-2.....19

7.Քերականական առաջադրանք.....20,21,22,23

9.Եզրակացություն.....24

Ներածություն

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ:Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը,որոնք պետք է տա դպրոցը:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունն է,որը լավագույն կերպով մատուցվում է մայրենիի դասընթացների ժամանակ: Այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին

կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար։

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի բնավ հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ։Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները։

Փորձենք հասկանալ թե ի՞նչպես է ձևավորվում արժեքային համակարգը Մայրենիի դասերին։

· Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002, էջ 65:

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ընդհանուր առմամբ արժեքային համակարգի ձևավորումը երեխաների մոտ,նպատակ ունի ձևավորել անձ և քաղաքացի,որը պետք է՝

1.Գիտակցի սեփական մշակույթի՝

Լեզվի, պատմության, ազգային արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը։

2.Հարգի Հայաստանի խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը։

3.Գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներն են ժամանակակից աշխարհում։

4.Գիտակցի, որ գիտությունը իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները։

5. Կարևորի բարոյական չափանիշները, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ։

6.Կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը։

7.Գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք։

8.Գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը։

9. Հարգի մարդու իրավունքներն ու լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ։

10.Անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը։

11.Դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, գնահատի սեփական և այլոց աշխատանքը։

Armedu.am,AsyaYԿրտսեր դպրոցականի արժեքային համակարգի ձևավորումը/համացանց/

2.Գրական ակնարկ

Ուսումնական գործընթացում, գործնական պարապունքների ընթացքում ուսուցիչը օգտագործում է դասավանդման տարբեր մեթոդներ: Այդ մեթոդներից մեկն է ժամանակակից ինտերակտիվ ուսուցման մեթոդը, որի միջոցով ուսուցման պրոցեսը կարելի է դարձնել ավելի արդյունավետ

Ի՞նչ է ինտերակտիվ ուսուցումը:

ՈՒսուցման պրոցեսում տարբերում են դասավանդման պասիվ, ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ: Պասիվ մեթոդ՝ այս դեպքում ուսուցիչը հիմնական գործող անձն է, որը ղեկավարում է դասընթացը, իսկ աշակերտներրը պասիվ լսողներ են: Ուսուցիչ-աշակերտ կապը իրականացվում է հարցումների, թեստերի, ստուգողական աշխատանքների միջոցով: Այս մեթոդը քիչ էֆեկտիվ է: Դրա առավելությունը միայն սահմանափակ ժամանակում նյութի մեծ ծավալի մատուցումն է:

Ակտիվ մեթոդները հիմնված են ուսուցիչ-աշակերտ համագործակցության վրա, այսինքն՝ ուսուցիչը և աշակերտները հավասարապես մասնակցում են ուսումնական գործընթացին:

Ակտիվ մեթոդների նպատակն է՝ բոլոր պրոցեսների (խոսք, հիշողություն, երևակայություն) օգտագործումն գիտելիքների, հմտությունների յուրացման համար: Աշակերտը գիտելիք է ստանում տարբեր աղբյուրներից ինֆորմացիայի վերլուծման արդյունքում: Ակտիվ ուսուցման մեթոդները սովորելու, ճանաչողական գործունեություն ծավալելու ուղիներն են, ինչի համար աշակերտները պետք է մտածեն, ստեղծագործեն:

Ինտերակտիվ մեթոդը կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձև: Այս հասկացությունը ծագել է անգլերեն «interact», «inter- փոխադարձ», «act-գործել» բառերից:

Ինտերակտիվ ուսուցումը դա երկխոսությամբ ուսուցում է, որի ընթացքում աշակերտները համագործակցում են ոչ միայն ուսուցչի, այլև միմյանց հետ: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ ուսուցիչը նոր գիտելիքներ փնտրելու իր հանձնարարություններով մասնակիցներին ուղղորդում է անկախ հետազոտությունների կատարմանը:

Ուսուցչի ֆունկցիաներն են՝

1. Բացատրել սպասվելիք աշխատանքի նպատակը: Դասի սկզբում հայտարարել թեման և քննարկվող հարցերը:
2. Բաժանել աշակերտներին խմբերի և տալ հանձնարարություններ:
3. Չթողնել առանց ուշադրության սխալ մեկնաբանությունները, սակայն միևնույն ժամանակ միանգամից չտալ ճիշտ պատասխանը:
4.
5. Հետևել, որ քննադատվի միտքը, կարծիքը, այլ ոչ թե միտքը արտահայտող աշակերտը:
6. Օգնել աշակերտներին գալ ընդհանուր եզրահանգման և դասի վերջում անել եզրակացություններ, որոնք ունեն պրակտիկ և ընդհանուր նշանակություն:

Ուսուցչի ֆունկցիան աշակերտի ինքնուրույն աշխատանքի կազմակերպումն է: Հայտնի է, որ նոր բան սովորելիս մարդը թույլ է տալիս սխալներ, ուսուցչի խնդիրը կայանում է նրանում, որ աշակերտը ուսումնական պրոցեսում կատարված սխալները ուսումնասիրի, վերլուծի և հետագայում սխալներ թույլ չտա:

Ինտերակտիվ մեթոդները կիրառելիս, ուսուցիչը դադարում է լինել տեղեկատվության հիմնական տեղեկատու, միայն կարգավորում կազմակերպում է գործընթացը, տալիս խորհրդատվություն:

ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԴԱՍԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

- Բոլոր մասնակիցները հավասար են
- Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի իր կարծիքը ներկայացնել ցանկացած հարցի վերաբերյալ
- Աշխատանքի մեջ պետք է ներգրավված լինեն բոլորը
- Ոչ մի սովորող չի քննադատվում
- Պետք է հոգալ մասնակիցների հոգեբանական պատրաստվածության մասին. խոսքը գնում է նրա մասին, որ ոչ բոլոր մասնակիցներն են հոգեպես պատրաստ ներգրավվելու այս կամ այն աշխատանքի մեջ: Այս առումով օգտակար է գովքը, ակտիվ մասնակցության ինքնադրսևորման համար:

• Ձևավորում է ինքնուրույն տեղեկատվություն գտնելու, վերլուծելու կարողությունը: Զարգացնում է մյուսների տեսակետը լսելու, համագործակցելու կարողությունը:

Ինտերակտիվ ուսուցման մեթոդներ

Ինտերակտիվ դասավանդման մեթոդները բաժանվում են 2 խմբի՝ իմիտացիոն և ոչ իմիտացիոն: Իմիտացիոն տեխնոլոգիաների հիմքում ընկած է իրական իրավիճակների գործնեության խնդիրների վերարտադրումը ուսումնական պրոցեսի ընթացքում: Ոչ իմիտացիոն մեթոդները բնութագրվում են ուսումնասիրվող գործընթացի մոդելի բացակայությամբ, հարց-պատասխան հաղորդակցությամբ: Ոչ իմիտացիոն մեթոդներից են՝ դասախոսությունը, սեմինարը: Իմիտացիոն մեթոդները բաժանվում են խաղային և ոչ խաղային:

Ակտիվ և ինտերակտիվ ուսուցման գաղափարը սովորողի ուշադրության կրթական և ճանաչողական մտածելակերպի ակտիվացումն է: Հետևաբար ակտիվացման մեթոդների կիրառումը թույլ կտա ավանդական տիպի դասը մոտեցնել ինտերակտիվ տարբերակին: Դասի ընթացքում սովորողների ակտիվ ճանաչողական գործունեության մոբիլիզացման համար, դասը պետք է սկսվի հետաքրքիր ներածական մասից: Օրինակ կարելի է ներկայացնել թեմայի կարևորությունը սովորողի գործունեության համար, ցույց տալ դասի թեմայի կապը նախորդ թեմայի հետ: Կարող են օգտագործվել տեսանյութեր, ուր կցուցադրվի տեսական նյութի կիրառումը գործնականում:Դասի հետաքրքիր սկզբնամասից առաջացած ակտիվությունը պետք է պահպանվի ամբողջ դասի ընթացքում ։

Ինտերակտիվ դասավանդման մեթոդները բաժանվում են 2 խմբի՝ իմիտացիոն և ոչ իմիտացիոն: Իմիտացիոն տեխնոլոգիաների հիմքում ընկած է իրական իրավիճակների գործնեության խնդիրների վերարտադրումը ուսումնական պրոցեսի ընթացքում: Ոչ իմիտացիոն մեթոդները բնութագրվում են ուսումնասիրվող գործընթացի մոդելի բացակայությամբ, հարց-պատասխան հաղորդակցությամբ: Ոչ իմիտացիոն մեթոդներից են՝ դասախոսությունը, սեմինարը: Իմիտացիոն մեթոդները բաժանվում են խաղային և ոչ խաղային:

Ինտերակտիվ մեթոդները կիրառվում են և՛ դասախոսության և՛ գործնական պարապունքի ժամանակ:

Ակտիվ և ինտերակտիվ ուսուցման գաղափարը սովորողի ուշադրության կրթական և ճանաչողական մտածելակերպի ակտիվացումն է: Հետևաբար ակտիվացման մեթոդների կիրառումը թույլ կտա ավանդական տիպի դասը մոտեցնել ինտերակտիվ տարբերակին դասի ընթացքում սովորողների ակտիվ ճանաչողական գործունեության մոբիլիզացման համար, դասի պետք է սկսվի հետաքրքիր ներածական մասից: Օրինակ կարելի է ներկայացնել թեմայի կարևորությունը սովորողի ապագա գործունեության համար, ցույց տալ դասի թեմայի կապը նախորդ թեմայի հետ: Կարող են օգտագործվել տեսանյութեր, ուր կցուցադրվի տեսական նյութի կիրառումը գործնականում: Դասի հետաքրքիր սկզբնամասից առաջացած ակտիվությունը պետք է պահպանվի ամբողջ դասի ընթացքում:

http://armedin.am › uploads › 2019/09 › Ակտիվ-.../համացանց/

Նախադպրոցական դիդակտիկայում ներկայումս լայն տարածում գտած ուսուցման

Ժամանակակից՝ խաղային, գործնական, մեթոդների կիրառումը երեխաների համար

պարապմունքը դարձնում է հաճելի և արդյունավետ:Ինտերակտիվ մեթոդները նպաստում

են երեխաների՝ազատ մտածելու,համարձակ կարծիք հայտնելու կարողությունների

զարգացմանը:Դրանք ունեն մի շարք առանձնահատկություններ:Ինտերակտիվ մեթոդները

հնարավորություն են ընձեռում՝

- արթնացնել երխաների ճանաչողական հետաքրքրությունները
- զարգացնել համագործակցային կարողությունները և հաղորդակցման ունակությունները
- բացահայտել յուրաքանչյուր երեխայի անհատական առանձնահատկությունները

- զարգացնել տրամաբանական մտածողությունը
- ձևավորել վերլուծական կարողություններ։

Նախաշավիղ 2014.2Փոխներգործուն մեթոդների կիառման արդյունավետությունը ինտեգրված պարապմունքների ընթացքում

3.Փորձարարական հետազոտություն

3.1 Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Արագածոտնի մարզի Կոշի միջնակարգ դպրոցում՝ 3-րդ դասարանում, ցանկանալով՝ սովորողների մեջ արթնացնել սեր դեպի հայրենիքը, ծննդավայրը, բնօրրանը: Ձևավորել հայրենասիրություն, ընկերարասիրություն, նվիրվածություն, ազնվություն ու հարգանք ծնողի, հայրենիքի և հայրենի սահմանների նկատմամբ: Այս թեման հոգեհարազատ է նրանց համար, քանի որ նրանք զգացել են հայրենիքի կարևորությունը: Այս դասարանում սովորում են տասնինը աշակերտ՝ տասներկու տղա և յոթ աղջիկ, որոնք ունեն բարձր առաջադիմություն: Մայրենին 3-րդ դասարանում անցնում են ութ ժամով և այն դասացուցակում տեղադրված է առաջին, երկրորդ և երրորդ ժամերին: Ինտերակտիվ ուսուցման միջոցով ցանկացել եմ խորացնել հայրենիքի նկատմամբ վեհ զգաղափարները՝ հանձնարանելով առաջադրանքներ: Բոլորը սիրով կատարեցին տրված առաջադրանքները: Մի քանի ինտերակտիվ ուսուցման մեթոդների կիրառման միջոցով ունեցա լավ արդյունք: Աշակերտների մոտ նկատեցի մեծ ոգևորություն:Ես համոզվեցի, որ ինտերակտիվ ուսուցման մեթոդի կիրառումը տվեց իր արդյունքը՝ խորացնելով սերն ու հարգանքը հայրենիքի, ծնողի, բնօրրանի նկատմամբ:

Փորձարարական դաս-1

Դասը սկսեցի ողջույնի խոսքով՝

Արևը շողաց, լույսը բացվեց՝ բարի լույս

Թռչունները ծլվլացին՝ բարի լույս

բարի լույս։

Հայրենիքի, բնօրրանի, ծննդավայրի մասին թեմաները որոշակի չափով ծանոթ են երեխաներին դեռևս անցած դասերից/տես դասապլան1/։

Նոր թեման հաղորդվեց.

Թեմայի ուսուցման ժամանակ օգտագործել եմ ԽԻԿ համակարգը։ Դասի խթանման փուլում կատարել եմ <<Մտագրոհ>> մեթոդ։։ Մեթոդի կիրառման ժամանակ յուրաքանչյուրի արտահայտած մտքերը գրառվել է գրատախտակին։ Մտագրոհի մեթոդով աշակերտները ներկայացրել են,թե ովքեր են հերոս և ովքեր են համարվում հայրենիքի մի զարկը։

Այնուհետև առաջարկվել է բացել դասագիրքը և կարդալ բնագիրը։Իմաստի ընկալման փուլում երեխաները կարդացել են բնագիրը՝միմյանց շարունակելով,ապա՝ընտրովի և դերերով։Աշակերտները պատասխանել են ընտրովի ընթերցանության համար նախատեսված հարցերին՝

1.Ո՞վ էր Հայկը և ինչու՞ հեռացավ Բելից։

2.Ո՞վ էր Բելը և ինչու՞ հարձակվեց Հայկի վրա։

3.Կարդալ Հայկին և Բելին բնութագրող տողերը։

4.Կարդալ Հայկի և Բելի կռիվը նկարագրող հատվածը։

Յուրաքանչյուր աշակերտ կատարեց նաև քերականական առաջադրանքներ գոյականի վերաբերյալ։Այնուհետև Տ-աձև աղյուսակով բնութագրեցին Հայկին և Բելին։Որից հետո աշակերտները կարողացան մեկնաբանել Հայկի կերպարը որպես հայրենասերի,իսկ Բելին՝ բռնականլի,վախկոտի։ Կշռադատման փուլում անդրադարձ կատարեցին դասանյութին,ամփոփեցին հարցերի միջոցով,կիրառեցի <<Քառաբաժան>> մեթոդը՝պատասխանելով հետևյալ հարցերին՝

- Ի՞նչ տեսա։
- Ի՞նչ լսեցի։
- Ի՞նչ զգացի։
- Ի՞նչ սովորեցի և իմացա։

Փորձարարական դաս-2

Նոր թեման խթանման փուլում հաղորդելիս կիրառեցի <<Բանալի բառեր>> մեթոդը։ Գրատախտակին գրեցի բանալի բառերը՝ Մասիս, մնաց գերի, ցրվեց, չձուլվեց, հայոց գրեր, ստեղծեց, հայ ազգ, Մեսրոպ Մաշտոց։ Առաջարկեցի աշակերտներին կանխագուշակումներ անել, տեքստի բովանդակության վերաբերյալ, պատմություն հորինել տրվածով և գուշակել, թե Մեսրոպ Մաշտոցը ինչ կապ կարող է ունենալ տրված բառերի հետ։ Աշակերտների գուշակությունները, պատմությունները լսելուց հետո իմաստի ընկալման փուլում առաջարկեցի ընթերցել բնագիրը <<Ուղղորդված ընթերցանություն>> մեթոդով։ Բնագիրը ընթերցելուց հետո աշակերտները պատասխանեցին հետևյալ հարցերին՝<<Ի՞նչ արեց Մեսրոպ Մաշտոցը։ Ինչ՞ու հայը չձուլվեց>>։ Որից հետո աշակերտները կատարեցին քերականական առաջադրանքներ բայի վերաբերյալ։

Կշռադատման փուլում կիրառեցի <<Վեննի դիագրամ>> մեթոդը։ Աշակերտները տվեցին համեմատական բնութագիր Հայկին և Մեսրոպ Մաշտոցին։ Գտան նրանց նմանություններն ու տարբերությունները հասկանալով՝Հայկը հայրենիքի համար պայքարել է զենքով, իսկ Մեսրոպ Մաշտոցը՝ գրչով։

Այսպիսով՝ Հայկի սխրանքի շնորհիվ մենք հայ մնացինք, ունեցանք մեր երկիրը, Մեսրոպ Մաշտոցի շնորհիվ՝ խոսում և գրում ենք հայերեն։ Կշռադատման փուլում դասին մասնակցեցին դասարանի բոլոր աշակերտները և ստացան լավ գնահատականներ։ Վերջում հանձնարարեցի կարդալ ամբողջ դասը։

4. Վերլուծություն

Աշակերտների մեջ արժեքային համակարգ ձևավորելեի համաև անցկացրի երկոյի փորձարարական դաս,որի ժամանակ դասին մասնակցեց ամբողջ դասարանը։

Դասաժամերին անցկացնելով ինտերակտիվ դասեր,համադրելով գրավոր,բանավոր առաջադրանքները, զգացվեց, որ կա մեծ ոգևորություն առաջընթաց։ Աշակերտներին հոգեհարազատ է հայրենասիրություն թեման։ Վերլուծելով ածխատանքները եկա այն եզրակացության, որ առաջընթաց կահետևյալ գործոններով։

1.Կանխագուշակումներ

2.Համագործակցային խմբեր

3.Խմբային աշխատանք

4.Ինտերակտիվ առաջադրանքներ և այլն

Յուրաքքնչյուր աշխատանք կատարելիս ստուգեցի արդյունքները և հասկացա,որ համեմատական,համագործակցային աշխատանքների արդյունքում աշակերտները կարողանում են ճիշտ կողմնորոշվել և ճիշտ եզրահանգումներ կատարել։ Աշակերտների մոտ զարգացավ հոմանիշ-հականիշ, գոյականի ձևափոխությունները խոսքում, բայի մասին քերականական գիտելիքները, հարստացավ նրանց բառապաշարը և ամենակարևորը նրանց մեջ ձևավորվեց սեր, հարգանք, նվիրվածություն հայրենիքի, բնօրրաննի, ծննդավայրի, առանց որոնց չեն կարող հասնել բարուն և լավին։

Կային նաև թերություններ,որոնք կրկնակի հարցադրման և բացատրման արդյունքում այդ թերությունները վերացան։ Արդյունքը գերազանց։

Եզրակացություն

Այսպիսով, հետազոտական աշխատանքի ընթացքում ելնելով իմ առաջադրած նպատակից և հիմնական հետազոտության վարկածից, հանգել եմ հետևյալ եզրակացությունների, որ կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացումը մայրենիի ժամերին անհրաժեշտ և կարևոր գործնթաց է, բավականին բարդ գործընթաց է, քանի որ այն պայմանավորված է ոչ միայն մանկավարժական գործընթացով, այլև աշակերտի անձնային հատկություններով: Հանրակրթության համակարգում ինտերակտիվ ուսուցումը առանձնահատուկ տեղ ունի՝ մի կողմից որպես աշխարհաճանաչողության, անձի ձևավորման, նրա մտավոր առաջընթացի, հոգեբանական գործընթացների՝ ուշադրության, հիշողության, երևակայության, տրամաբանական և պատկերավոր մտածողության զարգացման հիմնական միջոց :Այս գործընթացն անհրաժեշտ է իրականացնել նորարարական մեթոդների կիրառմամբ : Տվյալ հետազոտական աշխատանքի ընթացքում դիտարկվել է նոր մոտեցում, որը կայանում է նորարարական մեթոդների կիրառման մեջ: Մասնավորապես, հետազոտական աշխատանքի ընթացքում գործածվել են այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են համագործակցությունը դասի ընթացքում ուսուցիչ- աշակերտ և աշակերտ-աշակերտ ձևաչափով, ինչպես նաև գործնական աշխատանքների լայն կիրառությունը զույգերի համագործակցության պայմաններում: Նշված մեթոդների կիրառությունը զգալի դրական արդյունքներ է տվել հետազոտական դասերի ընթացքում՝ բավականին մեծ հետաքրքրություն խթանելով աշակերտների մոտ: Մայրենի լեզվի դասաժամերին ևս լուծվում են տարրական դպրոցի համար խիստ ընհանրական խնդիր: Ինչպե՞ս զարգացնել հաղորդակցական կարողությունները ՝ վերը նշված մեթոդների կիրառմամբ : Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

5.Գրականության ցանկ

1.Ա.Գևորգյան Կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակոիթյսն գործընթացում,Եր.2002,էջ 65

2.Ինտերակտիվ ուսուցում համացանց

3.Նախաշավիղ ամսագիր,թիվ 2.2014,Հասմիկ Մուշեղյան,էջ 27

4. Մայրենի 3 դասագիրք Վ.Սարգսյան,Հ. Խաչատրյան,Կ.Թորոսյան,Ե.Ջիլավյան

5. http://armedin.am › uploads › 2019/09 › Ակտիվ-.../համացանց/

Հավելված 1

Դասապլան

ՈՒսուցիչ՝ Լիլիթ Թադևոսյան

Առարկա	Մայրենի	Ամսաթիվ	18.09.22	Կիսամյակ	1	՛Դասարան	3
Թեմա	Հայկը և Բելը						
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, տետր,գրիչ,քարտեր,որոնց վրա գրված են քերականական առաջադրանքներ,համակարգիչ, հերոսների նկարներով պաստառներ						
Դասի նպատակը՝	ԻՄԱՆԱ՝ .Հերոսներին համեմատել ու հակադրել: .Նկարագրական խոսք: . Գոյականներ: .Վարժ,սահուն, դերերով կարդալ:						
Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ դասը տեղի է ունեցել							
Վերջնարդյունքներ	ԿԱՐՈՂԱՆԱ՝ . վարժ կարդալ, .վերարտադրել կարդացածը . կատարել տեքստային աշխատանքներ . բնութագրել կերպարները, . կատարել վերլուծական աշխատանքներ . կատարել քերականական աշխատանքներ:						
Գործողություններ / ժամ/տևողություն/	ՈՒսումնական գործունեություն աշակերտներ		ՈՒսումնական գործունեություն ուսուցիչ		Հարցադրումներ		Կիրառվող մեթոդներ
Դաս 45 ր 5ր տնային ստուգում Դասի հարցում՝ 20ր 15ր նոր նյութի հանձնարարում, 5ր խմբային աշխատանք 5ր ամփոփում, տնային հանձնարարութ-յուն	Բացեն դասագրքերը, Պատրաստվեն նոր դասին; Ներկայացնել տնային աշխատանքները: Պատասխանեն հարցերին, քերականական աշխատանք՝ գոյականի վերաբերյալ, կատարեն վերկուծություններ		Ողջունում է դասարանին, Զրույցի միջոցով բացատրում է դասը, .Հիշեցնում է դասի թեման. .Ստուգում է տնային աշխատանքները. .Բացատրում է անհասկանալի մասերը. . Հանձնարարում է միմյանց շարունակելով կարդալ դասը. . բացատրում է միտքը, նոր, անծանոթ բառերը,		Ո՞վ էր Հայկը ու ի՞նչու հեռացավ Բելից: Ո՞վ էր Բելը ու ինչու՞ հարձակվեց Հայկի վրա: Կարդալ Հայկին և Բելին բնութագրով հատված: Կարդալ Հայկի Բելի կռիվը նկարագրող հատվածը:		Մտագրոհ Նախապատրաստական զրույցներ,Տ-աձև մեթոդ, Քառաբաժան մեթոդ Համագործակցային մեթոդ
Տնային աշխատանք	Հանձնարարել գրել տնային առաջադրանք 6-ը ,սովորել կարդալ						

Հավելված2

Դասապլան

ՈՒսուցիչ՝ Լիլիթ Թադևոսյան

Առարկա	Մայրենի	Ամսաթիվ	26.09.22	Կիսամյակ	1	Դասարան	3
Թեմա	Հայոց հրաշքը՝ Մեսրոպ Մաշտոց						
նյութեր	Դասագիրք, տետր,գրիչ,քարտեր,որոնց վրա գրված են քերականական առաջադրանքներ,համակարգիչ, այբուբենի պաստառ,կավիճ						
Դասի նպատակը՝	ԻՄԱՆԱ՝ .Վարժ ու սահուն կարդալ: .Բնութագրել հերոսին: . Բայեր: .Տառերի ստեղծման պատմությունը . հոմանիշ-հականիշ բառեր:						
Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ դասը տեղի է ունեցել							
Վերջնարդյունքներ	ԿԱՐՈՂԱՆԱ՝ . վարժ կարդալ . կատարել տեքստային աշխատանքներ . կանխագուշակել . կատարել վերլուծական աշխատանքներ . կատարել քերականական աշխատանքներ:						
Գործողություններ / ժամ/տևողություն/	ՈՒսումնական գործունեություն աշակերտներ		ՈՒսումնական գործունեություն ուսուցիչ		Հարցադրումներ		Կիրառվող մեթոդներ
Դաս 45 ր 5ր տնային ստուգում Դասի հարցում՝ 20ր 15ր նոր նյութի հանձնարարում,, 5ր խմբային աշխատանք 5ր ամփոփում, տնային հանձնարարութ-յուն	Բացեն դասագրքերը, Պատրաստվեն նոր դասին; Ներկայացնել տնային աշխատանքները: Պատասխանեն հարցերին, քերականական աշխատանք՝բայի վերաբերյալ,հոմանիշ-հականիշ, կատարեն վերլուծություններ		Ողջունում է դասարանին, Զրույցի միջոցով բացատրում է դասը, .Հիշեցնում է դասի թեման. .Ստուգում է տնային աշխատանքները. .Բացատրում է անհասկանալի մասերը. .Հանձնարարում է միմյանց շարունակելով կարդալ դասը. . բացատրում է միտքը, նոր, անծանոթ բառերը,		Ի՞նչ արեց Մեսրոպ Մաշտոցը: Ինչու՞ հայը չձուլվեց:		Բանալի բառեր, Վեննի դիագրամ մեթոդ,Խմբային աշխատանքներ
Տնային աշխատանք	Հանձնարարել գրել տնային առաջադրանք 3,սովորել կարդալ						

Քերականական առաջադրանք 1./Դաս 1/

1. Հայկ գոյականը տեղադրել նախադասություններում՝ ենթարկելով համապատասխան ձևափոխությունների.

——————— քաջ ու կորովաձիգ մի դյուցազն էր։

——————— սակավաթիվ զորքը հաղթեց Բելի մեծաքանակ զորքին։

Ես շատ եմ ուզում նմանվել ———————։

Այդ օրվանից ——————— անունով մեր երկիրը կոչվում է Հայաստան, իսկ մենք՝ հայ։

——————— հայերը քաջություն են ժառանգել։

Քերականական առաջադրանք 2

2.Նետ բառը համապատասխան ձևափոխություններով տեղադրել նախադասությունների մեջ։

Մտագրոհի մեթոդ

Արևի շողերին կլրացնեն Հայկ Նահապետ, Սասունցի Դավիթ, Զորավար Անդրանիկ, Մեսրոպ Մաշտոց, Մխիթար Հերացի, Կոմիտաս, Գարեգին Նժդեհ, Վիկտոր Համբարձումյան և այլն:



T-աձև աղյուսակով կբնութագրեն Հայկին և Բելին:

Հայկ	Բել
քաջ	հսկա
հսկա	վախկոտ
կորովաձիգ	բռնակալ
հպարտ	զոռոզ
համարձակ	ամբարտավան
անվախ	մեծամիտ
հայրենասեր	դաժան
ազնիվ	ինքնահավան
ուժեղ	

Անդրադարձ կատարել դասանյութին, ամփոփել հարցերի միջոցով և <<Քառաբաժան>> մեթոդով։

Ի՞նչ տեսա։ .Բարին հաղթում է չարին։ .Կարևոր է ազնիվությունն ու նվիրվածությունը։	Ի՞նչ լսեցի։ . Ում անունով է կոչվել մեր երկիրը։ .Ինչի համար ենք կոչվում հայ։
Ի՞նչ զգացի։ .Հպարտություն՝ հայ լինելու համար։	Ի՞նչ սովորեցի և իմացա։ .Գոյականի ձևափոխության մասին։ .Հայ ժողովուրդը ունի հազարամյա պատմություն

Քերականական առաջադրանք1/Դաս 2/

Գրել մեկ բառով.

միտք անել-

քար դսառնալ-

հերոս դառնալ-

լող տալ-

խաղ անել-

հեռու գնալ-

Քերականական առաջադրանք 2

Գրել հականիշները.

փակել-

բարձրանալ-

սիրել-

մեծանալ-

գտնել-

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մայրենիի դասագրքերի մեթոդական կառույցում քիչ են զետեղված կարդացած ստեղծագործության գաղափարի բացահայտման՝ կրտսեր դպրոցականների կարողությանը նպաստող մեթոդական քայլաշարերը: Դասաագրքերի մեթոդական կառույցում և մեթոդական ուղեցույցներում տեղ տալ գրականագիտական մեթոդական լուծմանը:Ուսուցիչների վերապատրաստման, ապագա դասվարների դասընթացներում կարդացած ստեղծացործության գաղափարի բացահայտման կարողության ձևավորմանը:
2. Հայրենասիրական ստեղծագործությունների ուսումնասիրության ընթացքում նկատելի դիդակտիկ նյութերի պակաս:
3. Ստեղծագործությունների գաղափարը և ենթատեքստը հասկանալու կարողության ձևավորմանը նպաստող հարցեր և առաջադրանքներ: